# ԴԻՑԱՄՈՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Ա. Հ.

*Հայկական լեռնաշխարհում հին քարի դարի միջին և վերին շրջանների սահմանագծում ձևավորված մայրական տոհմական համայնքը հիմնված էր մայրական իրավունքի և տոտեմական աշխարհայացքի վրա: Այս փուլում ծագում և ձևավորվում են Մեծ Մայր հասկացությունը և նրա պաշտամունքը՝ որպես տոհմի հովանավոր աստվածություն[1]: Հիշատակելի է, որ Հայաստանի ժայռա-պատկերներում կանանց պաշտամունքային նկարները ներկայացված են «լուսնանշանի և արևանշանի, պարույր-հավերժանշանի, աստղեր կամ աստղաբույլեր խորհրդանշող շրջանակների, այծերի, առյուծների և օձավիշապների հետ, որոնք բոլորն էլ ներկայացնում էին երկնային աշխարհը՝ երկնային օվկիանոսը, հավերժական այն միջավայրը, որտեղ, ըստ հնագույն պատկերացումների, հարատևում էին աստվածները»[2]: Մեծամորից հայտնաբերված կանանց կուռքերի արձանները վերաբերում են մ.թ.ա. II-I հազ. սահմանագլխին: Ուշագրավ է, որ Մեծամորի և Պուլուրի (Խարբերդի դաշտ)՝ կանանց կուռքերի տիպական ձևերն առկա են շումերական Նամու աստվածուհու քարե արձանիկներում: Փաստերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների և շումերական կրոնական պատկերացումների միջև կան շատ ընդհանրություններ[3]: Մայր-աստվածության պաշտամունքը տարածված էր փոքրասիական բոլոր ժողովուրդների մեջ և աղերսվել է ընտանի կենդանիների, ինչպես նաև ծառերի ու բույսերի պաշտամունքներին: Ըստ նյութական մշակույթի տվյալների՝ այն մեծ դեր է խաղացել հայերի կրոնական հավատալիքներում[4]: Մայր աստվածուհիների պաշտամունքի բնորոշ գծերից է նրանց վերագրվող բուժելու հատկությունը[5]: Հին կրոններում մայր աստվածուհիները ներկայանում էին նաև որպես ռազմի աստվածուհիներ: Այսպես, պարսիկների մոտ Նանեն համարվել է հաղթության դիցուհի[6], իսկ Շումերի*

---

[1] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 92:*

[2] *Տե՛ս* **Մարտիրոսյան Հ. Ա.,** *Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, Ժայռապատկերներ, պր. III, Ե., 1981, էջ 60:*

[3] *Նույն տեղում, էջ 60-61:*

[4] *Տե՛ս* **Մելիք-Փաշայան Կ. Վ.,** *Անահիտ դիցուհու պաշտամունքը, Ե., 1963, էջ 91, 96, 99, 100:*

[5] *Նույն տեղում, էջ 56:*

[6] *Նույն տեղում, էջ 36: Պարսկաստանում Նանեի պաշտամունքի մասին տեղեկություններ կան նաև Մակաբայեցիների Երկրորդ գրքում (Աստվածաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, Բ. Մակաբայեցիներ, I:13):*

*երկիր էր թափանցել Էրեք (Ուրուք) քաղաքում սիրո և ռազմի դիցուհին (Nina/Nini/ Anunit), որը միաժամանակ իր երկրի և ժողովրդի մայրն ու հովանավորն էր[7]: Inana-ի պաշտամունքը թափանցել էր Շումեր Հայկական լեռնաշխարհից՝ Արատայից[8]: Inana-ն (=Նանե)[9] եղել է նաև երկնքի կամ արևի աստվածություն: Նկատենք, որ Nan նշանակում է «օր., հետևաբար և՛ «արև», և՛ «երկինք», որը հայտնի է մարական սե-պագիր արձանագրություններից[10], որպես, մեկ այլ մեկնաբանու-թյամբ՝ «մեգրլ. na-na «մայր», «մայրիկ» (հմմտ. գալ.*na «կին»)[11], անձնանուն՝ Nan-i+a կրճատ ձևից, պարզեցված փաղաքշական ձևն է na-i+a «մայրիկ»[12]:*

*Պատմական զարգացման տարբեր փուլերում աստվածների գործառույթները երբեմն փոխվել են: Հնագույն ժամանակներում Մայր աստվածուհու գործառույթը պատկանել է Նանե դիցուհուն, որի պաշտամունքային կենտրոնը գտնվել է Նանեական (Մանանաղի) գավառում[13]: Հարցի ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում է նաև հետևյալ դիտարկումը. Վիրքի առասպելական լուսավորիչ Նինայի (վրաց. Nino, հայ. փոխանցմամբ՝ Նունե-յ) անունն ըստ ավանդության նշանակել է կին, կույս (հմմտ. ninna «միանձնուհի», ըստ էության՝ «կույս», «պառաված օրիորդ»)[14]: Որպես պաշտամունքային բառ՝nina-ն (resp.nuna/nana) նշանակել է երկինք, արև[15]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Սասնա ծռեր» էպոսում հանձին պառավ Նանեի՝ ներկայանում է Նանե դիցուհին, որը մարմնավորում է հունձք-բերքը հովանավորող աստվածուհուն[16]: Դիցանունն*

---

[7] Տե՛ս **Գավուրճյան Մ.**, *Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Ե., 1963, էջ 226:*

[8] *Նույն տեղում, էջ 230: Արատան եղել է Հայկական լեռնաշխարհի պետական հնագույն կազմավորում (մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.): Այդ երկրի կամ քաղաք-պետության մի զգալի մասը տարածվում էր Եփրատ և Տիգրիս գետերի միջև [տե՛ս* **Янковская Н. Б.** *Некоторые вопросы экономики Ассирийской державы, (Вестник древней истории, 1956, № 1, с. 38)]:*

[9] *Ըստ Գր. Ղափանցյանի՝ Թիլ գյուղում պաշտվող Նանե դիցանունը նման է փռյուգիական աստված Ատտիսի մոր անվանը, որը կոչվել է Նանա, աբխազական Անան-ին, շումերական՝ Ն-ին, Ին-ին և այլն* (*տե՛ս* **Капанцян Гр.** *Хайаса – колыбель армян, Е., 1947, с. 86):*

[10] *Տե՛ս* **Марр Н. Я.** *Избранные работы, т. V, М.-Л., с. 494:*

[11] *Նույն տեղում, էջ 243:*

[12] *Նույն տեղում, էջ 491:*

[13] *Ըստ Գր. Ղափանցյանի՝* «Mananali (*Mann-al -ḫg*) *մանանացիների երկիր»* (*տե՛ս* **Капанцян Гр.**, *նշվ. աշխ., էջ 203):*

[14] *Տե՛ս* **Марр Н. Я.** *նշվ. աշխ, էջ 483:*

[15] *Նույն տեղում, էջ 492:*

[16] *Տե՛ս* **Մելիք-Փաշայան Կ. Վ.,** *նշվ. աշխ., էջ 36: Նանեի մասին կան տարբեր կարծիքներ: Պ. Լագարդը աստվածուհու անունը բխեցնում է սանսկրիտերեն Նանա բառից: Մ. Էմինը դիցանունը դիտում է որպես Իշտարի անուններից մեկը: Նանեն համարվում է նաև բնիկ աստվածուհի, որը կարևոր դեր է խաղացել հայկական ցեղա-խմբերի շրջանում (նույն տեղում, էջ 35-36): Նա նաև պաշտվել է որպես*

*իր արտացոլումն է գտել նաև իգական Մանանա անձնանվան[17] և Բարձր Հայքի Մանանաղի գա-վառանվան մեջ[18]: Հայերենի բարբառներում նաև նշանակում է «մայր, մայրիկ», որի կոչական ձևերն են Նանէ, Նանա, Նանի[19]: Բնականաբար, Մանանա անվան մա բաղադրիչը, բովանդակում է մեծ իմաստը (հմմտ. Masis=Մեծ լեռ[20]), որի դեպքում անձնանունը ձեռք է բերում Մեծ մայր նշանակությունը, որն առկա է նաև գավառանվան պարագայում: Հայերենի բարբառներում մայր իմաստով հանդիպում է նաև «մա, մամ-խուռ. amma»[21] տարբե-բակը, այս պարագայում Մանանա անձնանունը ստանում է «մայր Նանա» նշանակությունը: Համահայկական պետական դիցարանում Նանե աստվածուհին պաշտվել է որպես իմաստության, հնարամտության, արվեստների և արհեստների, մայրության և ընտանեկան օջախի պահապան աստվածուհի[22]:*

*Պատմական Հայաստանի Դերջան գավառը և համանուն գյուղա-քաղաքը հայտնի էին նաև Մամախաթուն[23] (=Մայր խաթուն կամ Մեծ տիկին) անունով: Մ.թ.ա. II դ. Դերջանի մեջ ընդգրկված է եղել Մանանաղին՝ Նանեական գավառը[24]: Այդ դեպքում Մեծ տիկնոջ կերպարը որոշակիորեն կապվում է Նանե դիցուհու անվանը, որի պաշտամունքային կենտրոններից էր նաև Եկեղյաց գավառի Թիլ ավանը[25]: «Մասնա ծռեր» էպոսում նա ամնավորում է*

---

*իմաստության և ողջախոհության դիցուհի (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 905):*

*[17] Մանան արական անձնանվան ծագումը համարվում է անհայտ (տե՛ս* **Աճառյան Հր.**, *Հայոց անձնանունների բառարան, Ե., 1946, էջ 193):*

*[18] Ղ. Ալիշանը «Դարան-աղի, Մանան-աղի, Աղի-ովիտ անունների մեջ աղին ու աղ բառէն կը համարի, ինչպես և Աղաւրի և Աղտից ձոր անունները» (Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անուններ, Վիեննա, 1907, էջ 335, ծան. 1): Գր. Ղափանցյանը Մանանաղի (Մանաղի), Մարդաղի, Դարանաղի գավառանունների աղի վերջավորությունը դիտում է որպես տեղանվանակերտ ածանց (տե՛ս* **Капанцян Гр.**, *նշվ. աշխ., էջ 181): Ըստ մեկ այլ տեսակետի՝ այդ բաղադրիչը նշանակել է «դաշտ» (տե՛ս* **Կարապետյան Յովհ.**, *Սեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 121):*

*[19] Տե՛ս* **Աճառեան Հր.**, *Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 809:*

*[20] Տե՛ս Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 85:*

*[21]* **Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ.** , **Սարգսյան Գ. Խ.**, *Ուրարտու-Հայաստան, Ե., 1989, էջ 137:*

*[22] Տե՛ս* **Вардумян Г. Д.**, *Дохристианские культы армян, (Армянская этнография и фольклор, Е., 1991, № 18, с . 112).*

*[23] Գյուղաքաղաքի մոտ եղել է ճանապարհային կայան, որտեղ կանգուն է քարա-շեն մի շենք, որն, ըստ Քյաթիբ Չելեբիի, կառուցվել է մի փաշայի դստեր՝ Մամախաթունի ջանքերով (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. III, Ե., 1991, էջ 666): Տեղանվան այս մեկնաբանությունը ուշ ժամանակների ժողովրդական ստուգաբանություն է:*

*[24] Տե՛ս* **Հարությունյան Բ. Հ.**, *Մեծ Հայքի վարչաքաղաքական համակարգը ըստ "Աշխարհացոյց"-ի, Ե., 2001, էջ 106:*

*[25] Տե՛ս* **Капанцян Гр.**, *նշվ. աշխ., էջ 59:*

*Դեղձուն (=դեղձան, բաց դեղնագույն, խարտյաշ) Ծամին, որը ներկայանում է իբրև արեգակ[26]: Հետևաբար, գավառանունը, որն ունի տարընթերցումներ[27], կարելի է բխեցնել *Դեղձան կամ * Դերձան (հմմտ. դերձան թել [28]=Քառսուն Ճուղ-Ծամ)[29] բառից: Նշենք նաև, որ Դերջանում էր գտնվում Աթոռն Անահտա կամ Սբ. Գրիգոր լեռը: Գավառի Բագառիճ գյուղում հեթանոսության շրջանում գործում էր Հեփեստոսի կամ միհրական մեհյանը[30]:*

*Հեթանոսական Հայաստանում՝ Փոքր Հայքում և հարակից տարածքներում (Եկեղիք, Դերջան), տեղի են ունեցել այլ՝ մեծ մասամբ փոքրասիական պաշտամունքների կենտրոնացում և զարգացում: Հայասական դիցարանի վերլուծությունը բերել է այն համոզման, որ որոշ անուններ ակնհայտորեն ունեն սեմական ծագում կամ միջնորդավորման արդյունք են: Սակայն, ըստ բովանդակության, նրանց մեջ քողարկված գոյատևում են տեղական աստվածություններ ու պաշտամունքներ, որոնց մեծ մասին վերագրվում է փոքրասիական ծագում[31]: Ըստ հետազոտությունների՝ փոքրասիական ընդհանուր արտացոլում հանդիսացող Նանեն իր նոր՝ Անահիտ (=երկնային, երկնաբնակ)[32] անունով՝ որպես սիրո և պտղաբերության աստվածուհի, մեծ դեր է խաղացել հայերի մեջ: Նրա հին հայասական անունը եղել է Նանե կամ Հեպիթ, որը պահպանվել է հայերեն հոպիտ բառում՝ «պճնասեր, չարաճճի» նշանակությամբ: Քանի որ հայերը, Անահիտից բացի, պահպանել են նաև Նանեի պաշտամունքը, ապա ենթադրվում է, որ հին դարերում պաշտվել են երկու Հեպիտ աստվածուհիներ. մեկը՝ իրանական ազդեցությամբ՝ Անահիտ անունով (ավելի վաղ՝ Շամիրամ), իսկ մյուսը՝ Նանե, որը՝ որպես փոյուգիական ազդեցության հետևանք, կապված էր Սանգար գետի աստվածուհի Ատտիսի մոր՝ Նանայի անվան հետ[33]:*

---

[26] *Տե՛ս Սասնա ծռեր, Ե., 1951, էջ 871-872:*

[27] *Տե՛ս Հարությունյան Բ. Հ., նշվ. աշխ., էջ 72-73:*

[28] *«Դերձան… բամբակե մանած, լաթ կարելու յատուկ բարակ և պինդ թել, 2. բարակ առասան կանեփով պատրաստուած: Կրկնականն է թել-դերձան»* (Աճառյան Հր., *Հայերէն գաւառական բառարան, էջ 274):*

[29] *Տե՛ս* Սասունցի Դավիթ, *Հայ ժողովրդական հերոսավեպ, Առաջաբանը, բառարանը, ծան. Ս. Բ. Հարությունյանի, Ե., 1981, էջ 84-85: Հին հայկական Թիլ (հմմտ. հայ. թել, դերձան) տեղանունը նույնպես կապվում է դիցամոր մականվան հետ:*

[30] *Տե՛ս* Հարությունյան Բ. Հ., *նշվ. աշխ.,, էջ 73:*

[31] *Տե՛ս* Капанцян Гр., *նշվ. աշխ., էջ 85,97-98:*

[32] *Ըստ Հր. Աճառյանի՝ «*Նահիտէ, իգ. նոր անուն, որ հիշված է 1883 թ. Պոլսում …<պրս. Nāhīde ձևից, որ հյ. Անահիտ բառն է և նշանակում է «Արուսեակ մոլորակը» (Աճառեան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Ե., 1948, էջ 17): Ամենայն հավանականությամբ, դիցանունը կազմված է շում. an (=երկինք/երկնքի աստված [Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Ե., 2007, էջ 47, ծան. 2] բառից և տարբեր՝ այդ թվում նաև կրոնական առումներով օգտագործվող «իտ» ածանցից (տե՛ս* Կարապետեան Յովհ., *նշվ. աշխ., էջ 174):*

[33] *Տե՛ս* Капанцян Гр., *նշվ. աշխ., էջ 91:*

*Խեթական Թուդխալիա III (մ.թ.ա. 1410-1390 թթ.) և Հայասայի Կարաննի թագավորների միջև կնքված պայմանագիրը ներառում է խեթական և հայասական աստվածների ցուցակը, որտեղ նշված է Շամուխա քաղաքի հովանավոր աստվածությունը՝ «Շամուխա քաղաքի թագուհի» անվան տակ: Խուրրիական տեքստում նույնպես վկայվել է այդ քաղաքը, որտեղ պաշտվել է «Հեպիտ "mušni" (=հրաշագեղ) աստվածուհին»[34]: Դիցանունը տրվել է Արուսյակ մոլորակը մարմնավորող, սիրո և պտղաբերության աստվածուհի Իշ-տարի գաղափարագրով[35]:*

*Մեծ մայր պատվանունը կրել է նաև հայոց աշխարհի հովանա-վոր Անահիտ աստվածուհին, որը բնութագրվում է Իշտարին բնորոշ հատկանիշներով: Նա համարվել է նաև Լուսնի աստվածուհի և «համադրվել Արտեմիս դիցուհու հետ, որը դեռևս մ.թ.ա. IV դ. նույնացվել էր Սելենե-Լուսնին»[36]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Եկեղյաց գավառի Երիզա ավանում գտնվող Անահիտի մեհյանը հնագույններից մեկն էր, որի մասին վկայում են Պավսանիոսի և Պրոկոպիոսի հիշատակությունները[37]: Մեծ Աստվա-ծուհու պաշտամունքը տարածված է եղել Միջագետքից մինչև Հունաստան: Նրան էին նվիրված Հիերապոլիսի և Զելայի սրբավայրերը: Երեզում (Ակիլիսենե) պաշտվող աստվածուհին ուներ շատ ընդհանրություններ Կոմանայի և Զելայի Մայր աստվածուհու՝ Մա-ի և Կիբելեի հետ[38]: Հայոց մեջ նա համարվել է կանացի բոլոր առաքինությունները մարմնավորող մայր[39]: Բարձր Հայքի Ակիլի-սենե-Եկեղիք գավառում հեթանոսական շրջանում գտնվել է Անահիտ աստվածուհու տաճարը, որի անունով երկրամասը կոչվել է Անահտական: Ընդ որում, «Ակիլիսենեում Անահիտի մասին հիշատակում է Ստրաբոնը, իսկ Պլինիոս Ավագը և Դիոն Կասիոսը երկրամասը կոչում են համապատասխանաբար Anaitica և ἡ Ἀναιτις χώρα, որոնք Անահտականի թարգմանությունն են»[40]: Քրիստոնեության հաստատումից հետո Անահիտի մեհյանի տիրույթներն անցնում են եկեղեցուն, «որի հետևանքով «Անահտական երկիր» անվանումը դադարում է կիրառվելուց»[41] :*

---

[34] *Նույն տեղում, էջ 111: Շամուխա անվամբ հայտնի էին նաև այլ բնակավայրեր (տե՛ս* **Капанцян Гр.,** *նշվ. աշխ., էջ 61-62): Hajasa բառը է. Ֆորրերը բացատրում է որպես Haja երկիր, իսկ Haja-ն՝ այրի, ժողովրդի կամ աստծո անուն (տե՛ս* **Капанцян Гр**., *նշվ. աշխ., էջ 26):*

[35] *Նույն տեղում, էջ 91:*

[36] *Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 906:*

[37] *Տե՛ս* **Մելիք-Փաշայան Կ. Վ.,** *նշվ. աշխ., էջ 104:*

[38] *Տե՛ս* **Ադոնց Ն.,** *Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 379:*

[39] *Նույն տեղում:*

[40] **Հարությունյան Բ. Հ.,** *նշվ. աշխ., էջ 106:*

[41] *Նույն տեղում:*

*Ժամանակին ենթադրվել է, որ ստրաբոնյան Ակիլիսենե-Եկեղիքը ընդգրկել է Եկեղյաց[42], Դարանաղի[43], Մանանաղի, Աղյուն[44] և Մրն- ձուր[45] գավառների տարածքը[46]: Հետագայում կատարվել է ճշգրտում, ըստ որի, «…այս ցուցակից պետք է հանել Մանանաղին, որը և բնաշխարհագրական, ինչպես նաև հետագա վարչական բաժանումների տեսանկյունից կապվում էր ոչ թե Ակիլիսենեի, այլ Դերջանի հետ»[47]:*

---

[42] *Հ. Հյուբշմանը Եկեղիքի մասին գրում է. «Ծագմամբ այս մութ անունը՝ բնականապէս հյ. եկեղեցի (սեռ. եկեղեցւոյ, յք. սեռ. եկեղեցեաց) =յուն. εκκλησια բառին հետ առնչութիւն չունի» (***Հյուբշման Հ.,*** *Հին հայոց տեղւոյ անուններ, Վիեննա, 1907, էջ 130): Ն. Ադոնցի համոզմամբ՝ ak-ilis-ena-ն ըստ կազմության նման է daran-ali, man-ali, mard-ali տեղանուններին՝ բաղկացած լինելով Ake և ali (*ակէ-աղի) բաղադրիչներից: Հուն. ilis ձևի s վերջա-վորությունը վերարտադրում է կամ հայ. –ց –ն՝ մինչգրաբարյան սեռականի կամ հայցական հոլովի u-ն (***Адонц Н.*** *Армения в эпоху Юстиниана, Е., 1971, с. 55): Գր. Ղափանցյանը Եկեղիք տեղանունը բխեցնում է սումերական «ekl-um / eql-um (=դաշտ) բառից» (տե՛ս Капанцян Гр., նշվ. աշխ., էջ 86, ծան. 1): Երկրամասի անունը կարելի է կապել *եկեղեցի (=εκκλησια «հաւաքոյթ ժողովուրդի, զինվորների, յետնաբար՝ հաւատացեալների. հաւաքատեղի, յետնաբարէ եկեղեցի») բառի հետ: Նկատենք նաև, որ «հայերենի մէջ բառի –եցի վերջավորութիւնը հայկական յարմարեցում է և ոչ թե յունարէնի հարազատ տառադարձութիւն»* [Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ) հ. II, Ե., 1973, էջ 13*]: *Բառի ստուգաբանությունը («հաւաքոյթ ժողովրդի, զինւորների») հուշում է, որ տարածաշրջանում եղել է սահմանապահ իշխանություն, որը հաստատվում է սկզբնաղբյուրների տեղեկություններով (տե՛ս* ***Ղարագյոզյան Ա. Հ.,*** *Ժողովրդագրական տեղաշարժերը Հայաստանում (մ.թ.ա. II - մ.թ. XV դդ.), Ե., 2005, էջ 22):*

[43] *Գավառանվան հիմքում ընկած է դարան բառը, որը համարվում է իրանական փոխառություն պիլ. *daran ձևից և նշանակում է ամրություն, բնակություն, ձոր, կիրճ: Դարան բառի իրանական dar արմատը արտահայտում է ճեղքել, հսկել, ունել, պահել իմաստները (տե՛ս ՀԱԲ, հ. I, Ե., 1971, էջ 633):*

[44] *Ենթադրվում է, որ վարչատարածքային այս միավորը ձևավորվել է Դարանաղիի տարածքից, որի պատճառ են դարձել աղահանքերը: Գավառի անունը առաջացել է աղի արդյունահանությամբ զբաղվողների բնակավայրի՝ Աղի աւանի անունից, որն օրինաչափորեն վերածվել է՝ Աղեւանի, ապա՝ Աղեւնի, իսկ վերջին ձևից էլ՝ Աղիւն-ի (տե՛ս* ***Հարությունյան Բ. Հ.,*** *նշվ. աշխ., էջ 105):*

[45] *Հ. Հյուբշմանը գտնում է, որ հին հայկական Մրնձուր, Մզուր-Մրզուր անվանումները ծագում են հնագույն Մունձուր ձևից (***Հյուբշման Հ.,*** *նշվ. աշխ., էջ 128): Ըստ Ն. Ադոնցի՝ գավառանվան Մուզուր տարբերակն առաջացել է Ասորեստանի մայրաքաղաքի հյուսիսում գտնվող Մակլուբ լեռան վրա նախապես բնակվող մուզրի ժողովրդի՝ դեպի Դերսիմի շրջան տեղափոխվելու և հաստատվելու պատճառով (****Ադոնց Ն.,*** *Հայաստանի պատմություն, էջ 279): Բ. Հարությունյանի կարծիքով՝ տեղանվան նախնական ձևը եղել է Մուզուր (****Հարությունյան Բ. Հ.,*** *նշվ. աշխ., էջ 66): Սակայն ավելի հավանական է *Մ/ու/նձուր («այրված բանի մը ածխացած մնացուկը»), հմմտ. մնձուրել («խանձել, մրկել»,* (***Աճառեան Հր.,*** *Հայէրեն գաւառական բառարան, էջ 788) ձևը:*

[46] ***Адонц Н.*** *Армения в эпоху Юстиниана, СПБ., 1908, с. 55.*

[47] ***Հարությունյան Բ. Հ.,*** *նշվ. աշխ., էջ 106:*

Հայաստանում մեծարվող Մայր աստվածուհու երբեմնի սրբավայրերից մեկը գտնվել է Մեծամորում, որի մասին վկայում է հնա-վայրի (մ. թ. ա. III հազ.) անունը: Մեծամոր անունն են կրում նաև այժմյան Սև ջուր գետը և Այղր լիճը[48]:

Հայտնի է, որ յուրաքանչյուր ժողովրդի ցեղային անվանում կապված է արտադրական-հասարակական խմբավորման տոտեմի անվան հետ, որը մարդկային հասարակության փուլային զարգացման որոշակի աստիճանում նշանակել է երկինք, մասնավորապես՝ արև կամ ավելի ուշ ճշգրտմամբ՝ երկնքի որդի[49]:

Մայր աստվածուհիներից Inana-ի (=Նանե) պաշտամունքը առնչվել է Արևի, Անահիտինը՝ Արուսյակ մոլորակի հետ: Ժամանակին արևային աստվածություն է եղել նաև Աստղիկ (<հյ. աստղ բառից)[50] դիցուհին: Այդ մասին է վկայում Հայաստանի ժայռա-պատկերներում կանանց կուռքերի պատկերները աստղանշան շրջանակների հետ ներկայացնելու փաստը[51]: Արև աստվածը, որը նախապես ուներ իգական դրսևորում, հայրիշխանական համայնքի կազմավորմամբ դառնում է արական աստվածություն՝ Արամ[52]:

Ընդ որում, Հայկի աստվածացումը՝ որպես Օրիոն համաստեղություն, գաղափարական աջակցություն է գտնում հին աշխարհում[53]: Պատահական չէ, որ Մամախաթուն (=Մայր խաթուն կամ Մեծ տիկին) քաղաքի մոտ եղել է Haj-k անունով գյուղ[54]: Ուշադրության արժանի այդ տեղանունները լիարժեքորեն արտացոլում են պատմական զարգացման որոշակի փուլում ձևավորված պաշտամունքների փոխկապակցվածություն: Կարելի է ենթադրել, որ Հայկ-Օրիոն նույնացումը պայմանավորված էր ոչ միայն դիցաբանական կերպարների, այլև անվանումների ընդհանրությամբ[55]: Դա

---

[48] **Մելիք-Փաշայան Կ. Վ.,** *նշվ. աշխ., էջ 134:*

[49] *Տե՛ս* **Մարր Ն. Յ.,** *նշվ. աշխ., էջ 444:*

[50] **Աճառյան Հր.,** *Հայոց անձնանունների բառարան, հ. I, Ե., 1942, էջ 232:*

[51] *Տե՛ս* **Մարտիրոսյան Հ. Ա.,** *նշվ. աշխ., էջ 59-60: Այս երեք աստվածություններն արտացոլում են մեկ օրվա ընթացքում արևի դրսևորումները: Խեթական պետությունում նույնպես եղել են արևային աստվածություններ: Նրանցից ամենակարևորը Արինա քաղաքի աստվածուհին էր: Նրա անունն անհայտ է, որովհետև սեպագիր վավերագրերում գրվել է գաղափարագրով: Աստվածուհու պատվանունն էր «Խատտի երկրի թագուհի», «Խատտի երկրի թագավորներին և թագուհիներին ղեկավարող», պաշտվել է որպես պետության հովանավոր աստվածուհի (* **Струве В. В.** *История древнего Востока, М., 1941, էջ 253): Հավանական է, որ Արինա քաղաքը կոչվել է հենց հովանավոր աստվածուհու անունով:*

[52] *Տե՛ս* **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Թեգարամա (Թոգարմա)քաղաքի տեղորոշման հարցի շուրջ (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, № 4, էջ 8):*

[53] **Капанцян Гр.**, *նշվ. աշխ., էջ 39:*

[54] *Նույն տեղում, էջ 40:*

[55] *Հայկը նաև նույնացվել է շիկակարմիր Հրահատ (Մարս) մոլորակի հետ (տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 6, Ե., 1980, էջ 166):*

*երևան է գալիս այն պարագայում, երբ Օրիոն (հուն. Ωρίων) անվան մեջ դիտում ենք ari(i)o «պետ, տիրող, հրամայող»*[56] *հիմքը: Հավանական է, որ Միհրի դրան արձանագրությունում Ainaue-ի մեջ (-n- հոդով և aue վերջավորությամբ) նշված է Aiduni երկրի աստվածը (աստվածուհին), որը, կարող է ընկալվել նաև որպես Հայկ*[57]*:*

## СЛЕДЫ ПОЧИТАНИЯ ВЕЛИКОЙ МАТЕРИ В ТОПОНИМАХ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

КАРАГЕЗЯН А.А.

Резюме

На стыке среднего и верхнего палеолита на Армянском нагорье возник и сформировался культ великой матери как покровителя рода. Культ Инаны (=Нане) был связан с культом Солнца, а культ богини Анаит –с планетой Венера. Солнечным божеством являлась также Астхик. Перво-начально культ бога Солнца был связан с женским началом, однако с формированием патриархальной общины–с мужским. Следы культа великой матери сохра-нились во многих топонимах Армянского нагорья.

---

[56] **Ջահուկյան Գ. Բ.,** *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 287: Ի դեպ՝ հավանական է համարվում հայ ցեղանվան կապը poti («տեր», «տանտեր») արմատի հետ, որն առաջարկվել է դեռևս XIX դարում Շպիգելի և Կիպերտի կողմից (տե՛ս* **Պետրոսյան Ա.,** *Արամի առասպելը հնդեվրոպա-կան առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Ե., 1997, էջ 23):*

[57] *Տե՛ս* **Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ.,** *, նշվ. աշխ., ծան. 58, էջ 159-160: Հնդեվրոպական լեզուներում Մեծ մայր իմաստն արտահայտող ձևերի [«խեթ. hann-aš "տատիկ" = հայ. han(i), որը կա և լատ. anus "պառավ", գերմ. Ahne»/* (**Капанцян Гр.,** *նշվ աշխ., էջ 81] համեմատությունը բերում է այն համոզման, որ Դարանաղի գավառի Անի ամրոցի անվան առաջացումը պայմանավորված է եղել տեղում մայր աստվածուհու պաշտամունքի առկայությամբ: Ասվածը վերաբերում է նաև Անի անունը կրող Հայկական լեռնաշխարհի այլ տեղանուններին: Անի ամրոցի կառուցումը և անվանակո-չումը մինչ այժմ կապվում էր Հայասայի Աննիա թագավորի անվան հետ, որը ժամանակի կտրվածքով դիտարկելու դեպքում ունեցել է տեր (=թագավոր) իմաստը: Անի-Կամախը համարվել է հայասացիների մայրաքաղաք և Հայասա-Ազիի պաշտամունքամշակութային և առևտրական կենտրոն (նույն տեղում, էջ 109, ծան. 1): Դարանաղիի Անի ամրոցում գտնվել է հին՝ փոքրասիական աստված Մաժանին փոխարինող երկնքի աստված Արամազդի տաճարը (նույն տեղում, էջ 86):*

# TRACKS OF WORSHIPPING A GRAND MOTHER IN THE TOPONYMS OF THE ARMENIAN UPLAND

A.CARAGIOZYAN

Abstract

The concept and worship of grand mother appeared and developed on the Armenian upland as a protective deity of the tribe. The cult of Inane (=Nane) was associated with the Sun, while Anahit's cult was associated with Arusyak planet. Astghik was also a solar deity. With the formation of patriarchal community, the god of the sun who was initially of female origin, transformed into a male deity. The tracks of grand mother's worship can be traced in various toponyms of the Armenian highlands.